ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը հրավիրում է աճուրդի, որը տեղի կունենա **2022թ. օգոստոսի 10-ին, ժամը՝ 11:00-ին** Պետական գույքի կառավարման կոմիտեում, **ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ 4 ՀԱՍՑԵՈՒՄ**

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

ՀՀ կառավարության 2022թ. հուլիսի 14-ի N 1053-Ա որոշմամբ մասնավորեցման ենթակա «Էրեբունի բժշկական կենտրոն» առողջապահական պետական փակ բաժնետիրական ընկերության հիմնական միջոցները

Հ/Հ	Լոտի հերթական համարը	Լոտի անվանումը	Գտնվելու վայրը/հասցե	Չափի միավորը	Քանակը	Գնահատված արժեքը (ՀՀ դրամ)	Մեկնարկային գինը (ՀՀ դրամ)	Նախավճարը (ՀՀ դրամ)	Մասնակցության տոմսի վճար (ՀՀ դրամ)
1	1	Մահճակալի պահարան	«Էրեբունի բժշկական կենտրոն»	հատ	50	2 955 700	2 955 700	147 785	79 950
		Մոնիթոր՝ մոր և պտղի համար MMP-01	«Էրեբունի բժշկական կենտրոն»	հատ	1				
		Ֆետալ մոնիթոր Brattle-101	«Էրեբունի բժշկական կենտրոն»	հատ	1				
		Բժշկական ինետոր՝ ագիոգրաֆիայի համար	«Էրեբունի բժշկական կենտրոն»	հատ	1				
		Ջերմավիզր Ռադուգա Z/N 8801021	«Էրեբունի բժշկական կենտրոն»	հատ	1				
		Մոնիթոր՝ Ռետ GDR VNT 91-41	«Էրեբունի բժշկական կենտրոն»	հատ	1				
		Ապարատ Կոլին SGC 014001	«Էրեբունի բժշկական կենտրոն»	հատ	4				
		Մոնիթոր Պոսկարդ M 1351A	«Էրեբունի բժշկական կենտրոն»	հատ	1				
		Էլեկտրամամոգրաֆ EMG EES-12	«Էրեբունի բժշկական կենտրոն»	հատ	1				
		Ֆրանսիական վարագույր՝ կախիչով	«Էրեբունի բժշկական կենտրոն»	հատ	16				
		Դիալեզի ապարատ GOSPEL	«Էրեբունի բժշկական կենտրոն»	հատ	5				
		Լվացքի մեքենա Bosch	«Էրեբունի բժշկական կենտրոն»	հատ	1				
		Օդի կոմպրեսոր Մոտկա NOVALR	«Էրեբունի բժշկական կենտրոն»	հատ	1				
		Թթվածնի գեներատոր NOVALR	«Էրեբունի բժշկական կենտրոն»	հատ	1				
		Բարձր ճնշման կոմպրեսոր 2PS2B-85	«Էրեբունի բժշկական կենտրոն»	հատ	1				
		Միկրոանալիզատոր ԱՊ-215	«Էրեբունի բժշկական կենտրոն»	հատ	1				
		Անալիզատոր-մոդել AN SA 1400	«Էրեբունի բժշկական կենտրոն»	հատ	1				
		Սարքավորում 10-տեղանոց	«Էրեբունի բժշկական կենտրոն»	հատ	1				
		Բոգի կոմպրեսոր և զտման ֆիլտր BOGE S15	«Էրեբունի բժշկական կենտրոն»	հատ	1				
		Նևրոլոգիական սարքավորում Դանտեկ	«Էրեբունի բժշկական կենտրոն»	հատ	1				
		Ապարատ Digiflame	«Էրեբունի բժշկական կենտրոն»	հատ	1				
		Արհեստական երիկամի ապարատ Drake	«Էրեբունի բժշկական կենտրոն»	հատ	2				
		Արտրոսկոպիկ ուսումնական կոմպլեկտ	«Էրեբունի բժշկական կենտրոն»	հատ	1				
		Արհեստական երիկամի ապարատ Bakster	«Էրեբունի բժշկական կենտրոն»	հատ	1				
		Հարիչ	«Էրեբունի բժշկական կենտրոն»	հատ	1				
		Ապարատ ԷԿԳ (արտ.)	«Էրեբունի բժշկական կենտրոն»	հատ	1				
		Ապարատ ԷԿԳ (ԱՄՆ)	«Էրեբունի բժշկական կենտրոն»	հատ	1				
		Լազերային մոդել 250Z	«Էրեբունի բժշկական կենտրոն»	հատ	1				

		Էնդոմկրատներ	«Էրեբունի բժշկական կենտրոն»	հատ	12				
		NKTM-40010/04՝ յուղով	«Էրեբունի բժշկական կենտրոն»	հատ	1				
		Էլեկտրասրտագրիչ EKTS-01	«Էրեբունի բժշկական կենտրոն»	հատ	3				
		Սրտամոնիթոր SM-4211S	«Էրեբունի բժշկական կենտրոն»	հատ	2				
		Անզգայացման ապարատ	«Էրեբունի բժշկական կենտրոն»	հատ	1				
		Ֆիկսացիայի ապարատ	«Էրեբունի բժշկական կենտրոն»	հատ	2				
		Տրոկարների հավաքածու	«Էրեբունի բժշկական կենտրոն»	հատ	12				
		Արհեստական երիկամի ապարատ Bakster	«Էրեբունի բժշկական կենտրոն»	հատ	5				
		Բաջի ապարատ HL-1200	«Էրեբունի բժշկական կենտրոն»	հատ	1				
		Մոնիթորային համակարգ	«Էրեբունի բժշկական կենտրոն»	հատ	1				
		Ռենտգեն ապարատ RUM-20	«Էրեբունի բժշկական կենտրոն»	հատ	2				
		Ապարատ EDR-750-15	«Էրեբունի բժշկական կենտրոն»	հատ	1				
		Վիրաբուժական մոնիթոր	«Էրեբունի բժշկական կենտրոն»	հատ	1				
		Ապարատ Էնդոտոմ	«Էրեբունի բժշկական կենտրոն»	հատ	3				
		Ապարատ Ռոմանտիկա	«Էրեբունի բժշկական կենտրոն»	հատ	1				
		ՊՎԷՄ Էլեկտրոնիկա	«Էրեբունի բժշկական կենտրոն»	հատ	1				
		Ուրետրական համակարգ-սեղանիկ	«Էրեբունի բժշկական կենտրոն»	հատ	1				
		Ռենտգեն ապարատ TURD-800	«Էրեբունի բժշկական կենտրոն»	հատ	1				
		Սպեկտաֆոտոմետր Becman	«Էրեբունի բժշկական կենտրոն»	հատ	1				
		Մոնիթոր	«Էրեբունի բժշկական կենտրոն»	հատ	1				
		Էլեկտրաէնցեֆալոգրաֆ	«Էրեբունի բժշկական կենտրոն»	հատ	1				
		Անալիզատոր հունգարական	«Էրեբունի բժշկական կենտրոն»	հատ	1				
		Ապարատ սորբտիոն	«Էրեբունի բժշկական կենտրոն»	հատ	2				
		ESK կրոսպեկտ 400E	«Էրեբունի բժշկական կենտրոն»	հատ	1				
		Ռենտգեն ապարատ մամոգրաֆ	«Էրեբունի բժշկական կենտրոն»	հատ	1				
		Ռենտգեն ապարատ EOP	«Էրեբունի բժշկական կենտրոն»	հատ	1				
		Համակարգիչ VM	«Էրեբունի բժշկական կենտրոն»	հատ	1				

* Աճուրդի կազմակերպչի անվանումը, գտնվելու վայրը՝ ***«Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ (հասցե՝ ք.Երևան, Զաքիյան 10):***

* ***Գույքի մասնավորեցման աճուրդին մասնակցելու իրավունք ունեն «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» ՀՀ օրենքով մասնավորեցման սուբյեկտ ճանաչված անձինք:***

* Մասնակիցները վաճառվող լոտ(եր)ին կարող են ծանոթանալ սույն ծանուցման հրապարակման պահից մինչև աճուրդի բացմանը նախորդող օրը ընկած ժամանակահատվածում, լրացուցիչ տեղեկատվություն ստանալու համար զանգահարել «Էրեբունի բժշկական կենտրոն» առողջապահական պետական փակ բաժնետիրական ընկերություն՝ Աշոտ Բարսեղյան՝ 099-66-64-20 հեռախոսահամարով:

* Կազմակերպիչը պատասխանատվություն չի կրում աճուրդի ներկայացված լոտի (լոտեր) որակի համար: Աճուրդում գործում է հետևյալ սկզբունքը՝ «աճուրդի մասնակիցը «տեսել-համաձայնել է»:

Աճուրդին մասնակցության պայմանները՝

Աճուրդին մասնակցելու իրավունք են ձեռք բերում մասնավորեցման այն սուբյեկտները, որոնք սահմանված ժամկետում ներկայացրել են **հայտերը և պահանջվող փաստաթղթերը**:

Աճուրդին մասնակցելու համար Կազմակերպչին են ներկայացնում՝

- աճուրդի մասնակցության հայտը (հայտի ձևը ներկայացված է), *եթե հայտ ներկայացնողը ընկերություն է՝* ***հիմնադիր փաստաթղթերի պատճենները***.
- հայտատուի կողմից **ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տրված լիազորագիր** (եթե աճուրդին ներկայանում է լիազորված անձը),
- աճուրդի մասնակցության վճարի անդորրագիրը (յուրաքանչյուր նախընտրած լոտի համար, **պարտադիր նշելով մասնակցի անունը և ազգանունը**), **մուտքագրման հաշիվն** է՝ ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչության **թիվ 900018002981**, ստացող՝ «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ, վճարման նպատակը՝ աճուրդի մասնակցության վճար՝ պարտադիր նշելով մասնավորեցման մասին որոշման (հրամանի) համարը և ամսաթիվը, լոտի հերթական համարը, **մասնակցության վճարը գույքի (լոտի) գնի մեջ չի ներառվում և անկախ աճուրդի արդյունքներից չի վերադարձվում,**

- հայտատուի անձնագրի պատճեն, իսկ եթե հայտ ներկայացնողը իրավաբանական անձ է, իրավաբանական անձի հիմնադիր փաստաթղթերի պատճենները (ՀՀ պետական ռեգիստրի վկայականի և ղեկավար անձի անձնագրի պատճենները).

- նախավճարի վճարումը հաստատող անդորրագիրը (յուրաքանչյուր նախընտրած լոտի համար, **պարտադիր նշելով մասնակցի անունը և ազգանունը**), որի չափն է՝ գույքի (լոտի) մեկնարկային գնի 5 տոկոսը, **մուտքագրման հաշիվն** է՝ ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչության **թիվ** 900013145025, ստացող՝ ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե, վճարման նպատակը՝ ***աճուրդի նախավճար***՝ պարտադիր նշելով մասնավորեցման մասին որոշման (հրամանի) համարը և ամսաթիվը, լոտի հերթական համարը,

- աճուրդի մասնակիցը նախավճարը կամ մասնակցության վճարն իրականացնում է առցանց բանկային հաշվեհամարով կամ բանկի մասնաճյուղ այցելելով,

- վերը նշված փաստաթղթերի առկայության դեպքում Կազմակերպիչը մասնակցին տրամադրում է մասնակցի վկայական (տոմս),

- մասնակցի վկայականների (տոմսերի) տրամադրումը, **աճուրդի մասնակցության հայտերի** և պահանջվող փաստաթղթերի ընդունումը **դադարեցվում է աճուրդի անցկացման օրվանից մեկ օր առաջ**:

Աճուրդի մասնակից չհամարվող այն անձինք

- Աճուրդին կարող են ներկա գտնվել դիտորդներ՝ աճուրդի մասնակից չհամարվող այն անձինք, ովքեր վճարել են մուտքի վճարը՝ 2000 ՀՀ դրամ՝ ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչության թիվ 900018002981 հաշվեհամարին:

- Վճարումը հաստատող անդորրագիրը (նշելով վճարման նպատակը՝ դիտորդի տոմսի վճար) և անձնագիրի պատճեն ներկայացնել Կազմակերպչին՝ մինչև աճուրդի նախորդող օրը՝ «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ, (հասցեն՝ ք.Երևան, Զաքիյան 10), իսկ աճուրդի օրը՝ Պետական գույքի կառավարման կոմիտե ընդհուպ մինչև աճուրդի սկսվելը (հասցեն՝ ք.Երևան Տիգրան Մեծ 4):

- Աճուրդի մասնակիցները և մասնակից չհամարվող անձինք աճուրդի անցկացման դահլիճում զբաղեցնում են առանձին նստատեղեր:

- **Աճուրդի մասնակիցները և մասնակից չհամարվող անձինք պարտավոր են չխոչընդոտել աճուրդի անցկացմանն ու ենթարկվել աճուրդի կանոնակարգով սահմանված կանոններին:**

Աճուրդի անցկացման և աճուրդում հաղթողին որոշելու կարգը՝

- Աճուրդի մասնակիցների **անձնագրի և մասնակցի վկայական(ներ)ի** առկայությունը պարտադիր է, լիազորված անձի դեպքում՝ նաև **լիազորությունները հաստատող փաստաթղթերը**:

- Նախքան աճուրդի սկսվելը Կազմակերպիչը գրանցում է մասնակիցներին, ստուգելով նրանց ինքնությունը, լիազորությունները հաստատող փաստաթղթերը, ինչպես նաև աճուրդի մասին հրապարակային ծանուցման մեջ նշված այլ փաստաթղթերը և յուրաքանչյուր մասնակցին, ներկայացված մասնակցի վկայականի (տոմսի) համարին համապատասխան, տրամադրում է քարտեր:

- Աճուրդը բացվում է հայտարարությամբ: Հայտարարության մեջ նշվում է աճուրդում վաճառվելիք լոտի անվանումը և նկարագրությունը, դրա մեկնարկային գինը, լոտի նկատմամբ սահմանափակումները, ինչպես նաև աճուրդի անցկացման ձևը, այդ թվում՝ գնային հայտեր ներկայացնելու կարգը:

- Աճուրդն անցկացնում է աճուրդավարը, որը հրապարակում է վաճառվող գույքը բնութագրող ցուցանիշները, գույքի մեկնարկային գինը, աճուրդային քայլի չափը, որը սահմանվում է գույքի մեկնարկային գնի առնվազն 5 տոկոսի չափով:

- Աճուրդի մասնակիցը բարձրացնում է իր տոմսին համապատասխանող համարը, որով տալիս է իր համաձայնությունը հայտարարված գնով գույքը ձեռք բերելու մասին: Յուրաքանչյուր մասնակից կարող է գինն ավելացնել մեկ կամ մեկից ավելի քայլերով կամ քայլի չափից ոչ պակաս գումարով:

- Աճուրդավարն աճուրդը շարունակում է այնքան ժամանակ, քանի դեռ չի մնացել առավելագույն գին առաջարկած մեկ թեկնածու, որից հետո աճուրդը դադարեցվում է:

- Հայտարարված գնով գույքը ձեռք բերելու համաձայնություն չլինելու դեպքում աճուրդավարը կրկնում է մեկնարկային գինը: Գույքը մեկնարկային գնով 3 անգամ առաջարկելիս գնորդների բացակայության դեպքում աճուրդը համարվում է չկայացած և դադարեցվում է:

- Գույքի առավելագույն արժեքն առաջարկած թեկնածուն աճուրդավարի կողմից առաջարկված գինը 3-րդ անգամ հայտարարելուց հետո ճանաչվում է աճուրդի հաղթող:

- Եթե մի քանի մասնակից միաժամանակ գնային հայտ են ներկայացրել հավասար չափով, որից հետո ավելի բարձր գնային հայտ չի ներկայացվել, ապա աճուրդավարը վիճակահանության միջոցով որոշում է հաղթող մասնակցին:

Աճուրդի նախավճարի վճարման կարգը, ժամկետները և նախավճարի վերադարձման կարգը՝

- Աճուրդի հաղթող մասնակիցը պարտավոր է 30 րոպեի ընթացքում ներկայացնել մասնակցի տոմսն ու վճարել իր առաջարկած գնի առնվազն 5 տոկոսի չափով գումար, որը սահմանված ժամկետում (10 օրվա ընթացքում) հետագա վճարումների չկատարման դեպքում չի վերադարձվում: Գնորդը վճարումները կարող է կատարել նաև լիազորված անձի միջոցով:

- Վճարման դեպքում՝ աճուրդի հաղթողի առաջարկած գնի առնվազն 5 տոկոսի չափով գումարը և մասնակցության վճարը հաշվարկվում են հաղթողի (գնորդի) կողմից վճարման ենթակա գումարի մեջ:

- Եթե աճուրդի հաղթողը 30 **րոպեի ընթացքում** չի վճարել իր առաջարկած գնի առնվազն 5 տոկոսի չափով գումար, **ապա նրա մուծած վճարումները չի վերադարձվում**, և նա զրկվում է աճուրդին մասնակցելու իրավունքից ու դուրս է հրավիրվում դահլիճից: Այդ դեպքում գույքի աճուրդը վերսկսվում է մեկնարկային գնից:

- Եթե աճուրդի մասնակիցը տվյալ աճուրդի ժամանակ գույք չի գնել, ապա նրա մուծած նախավճարը վերադարձվում է դիմելուց հետո (**ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե գրավոր դիմումով**) 10 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե նախավճարն աճուրդի անցկացման օրվանից մեկ ամսվա ընթացքում հետ չի պահանջվում, ապա այդ գումարն աճուրդի մասնակցին չի վերադարձվում և փոխանցվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

*****Համաձայն ՀՀ կառավարության 2022թ. հուլիսի 14-ի*** *N 1053-****Ա որոշման՝***

- աճուրդը կանցկացվի **դասական** (**գնի ավելացման**) եղանակով,

- Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահն՝ աճուրդի հաղթողի կողմից առաջարկված գնի, ինչպես նաև գույքի շուկայական արժեքի որոշման դիմաց գանձվող գումարի վճարումից հետո ***մեկամսյա ժամկետում*** *գնորդի հետ կնքում է* ***մասնավորեցման մասին պայմանագիր:***

- Հաղթող մասնակցի կողմից սահմանված ժամկետում հետագա վճարումները չկատարելու դեպքում նախավճարը չի վերադարձվում և այն ուղղվում է ՀՀ պետական բյուջե:

** Լրացուցիչ տեղեկություններ ստանալու և աճուրդի անցկացման կանոնակարգին ծանոթանալու համար կարող եք դիմել «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ, հասցե՝ ք.Երևան, Զաքիյան 10 կամ զանգահարել՝ 010-52-63-32, 043-06-07-16 հեռախոսահամարներով, իսկ աճուրդի անցկացման կանոնակարգին ծանոթանալու համար կարող եք նաև այցելել հետևյալ հղումով՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=39023:*

Ծանուցում.

«Հրապարակային սակարկությունների մասին» օրենքի 9-րդ հոդված.

1. ***Այն պայմանները և տեղեկությունները, որոնք նշվել են աճուրդի մասին հրապարակային ծանուցման մեջ, ենթակա չեն փոփոխման, բացառությամբ այն դեպքերի, երբ փոփոխություններ են տեղի ունեցել աճուրդով վաճառվելիք լոտի նկատմամբ սահմանափակումների մասով կամ փոփոխություններ են տեղի ունեցել՝ կապված լոտի ֆիզիկական վիճակի հետ, կամ աճուրդի մասին հրապարակային ծանուցման մեջ նախատեսվել է փոփոխությունների հնարավորությունը:***

Սույն մասով նախատեսված դեպքում աճուրդի կազմակերպիչը պարտավոր է մինչև նախորդող երեք օրը կատարել աճուրդի մասին հրապարակային ծանուցման փոփոխություններ և լրացումներ (այսուհետ՝հրապարակային ծանուցման փոփոխություն) այն ձևով, ինչպես կատարվել էր աճուրդի մասին հրապարակային ծանուցումը:

2. ***Եթե հրապարակային ծանուցման փոփոխությունը չի կատարվել սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերում և կարգով, ապա աճուրդի կազմակերպիչը կրում է մասնակիցների կրած իրական վնասների ռիսկը:***

3. ***Աճուրդի մասին հրապարակային ծանուցում կատարելուց հետո թույլատրվում է հրապարակային ծանուցման փոփոխությամբ կատարել ցանկացած լրացում, եթե դրանով չեն փոփոխվում աճուրդի մասին հրապարակային ծանուցման մեջ նշված էական պայմանները:***

Քրեական օրենսգրքի 196 հոդված.

Հրապարակային սակարկությունների անցկացման կարգը չարամտորեն խախտելը, որը խոշոր վնաս է պատճառել գույքի սեփականատիրոջը, սակարկություններ կազմակերպողին, գնորդին կամ այլ տնտեսավարող սուբյեկտին՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

***Ուշադրություն. աճուրդի ընթացքը տեսաձայնագրվում է՝ դրա օրինականությունը ապահովելու նպատակով:**

ՀԱՅՏ
ԱՃՈՒՐԴԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ

_____
(հայտ ներկայացնողի անունը, ազգանունը, անվանումը (եթե ընկերություն է), հասցեն)

_____

1. Ծանոթանալով 20 թ. _____ ___-ին անցկացվելիք աճուրդում վաճառվելիք գույքի (բաժնետոմսերի) մասին տեղեկություններին՝ ցանկանում ենք (եմ) մասնակցել աճուրդին:
2. Աճուրդում գույք (բաժնետոմսեր) գնելու դեպքում պարտավորվում ենք (եմ)՝
ա) 30 րոպեի ընթացքում ներկայացնել մասնակցի տոմսը և տեղում վճարել առաջարկված գնի առնվազն 5 տոկոսի չափով գումար.
բ) 10 օրվա ընթացքում ամբողջությամբ վճարել գույքի (բաժնետոմսերի) արժեքը.
գ) մեկամսյա ժամկետում նախարարության հետ կնքել մասնավորեցման (սեփականաշնորհման) պայմանագիր*:
3. Համաձայն ենք (եմ), որ 10 օրվա ընթացքում համապատասխան գումարը չվճարելու դեպքում մեր մուծած մասնակցության վճարը և տեղում վճարած առաջարկված գնի առնվազն 5 տոկոսի չափով գումարը չվերադարձվի:
4. Մեր (իմ) ռեկվիզիտներն են (անձնագրի տվյալները) _____

_____

5. Կից ներկայացնում ենք (եմ) հիմնադիր փաստաթղթերի պատճենները (եթե հայտ ներկայացնողն ընկերություն է):

_____

(անունը, ազգանունը) (ստորագրությունը)
Կ. Տ.
_____ _____ 20 թ.

Հայտն ընդունված է _____ _____ 20 թ.

Ընդունող _____

(անունը, ազգանունը)

* գույքի գնման դեպքում